«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ, ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ»
ՊՈԱԿ

"МЕМОРИАЛЬНЫЙ КОМПЛЕКС
САРДАРАПАТСКОЙ БИТВЫ,
НАЦИОНАЛЬНЫЙ МУЗЕЙ ЭТНОГРАФИИ И
ИСТОРИИ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ
АРМЯН" ГНКО

ՀՀ Արմավիր համայնք, Արաքս վարչական տարածք, Դանիել-բեկ Փիրումյան փ. 1, հեռ. 060 68 78 18, 077 05 19 18

N 37

«20» մարտի 2024թ.

«ԷԼԻՏ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ԻՆ
ԷԼ. ՓՈՍՏ suren.gilavyan@mail.ru
ՀՀ Ք. ԱՐՄԱՎԻՐ ԿՈՄԻՏԱՍ 22
ՀՎՀՀ 01294545

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Հարգելի մասնակից

«Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ-ի և «Էլիտ Սեքյուրիթի» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի նոյեմբերի 2-ին կնքված N ՍՀԱՊԱԹ-ԳՀԾՁԲ-2024-3/Ս գնման պայմանագրի և պայմանագրին կից 06.02.2024թ. կնքված N 1 համաձայնագրի (այսուհետ Պայմանագիր) շրջանակներում «Էլիտ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն ստանձնել է հսկողության ծառայության մատուցման պարտավորություն, որը ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ու համաձայնագիրն ամբողջությամբ միակողմանի լուծվում է՝ հիմք ընդունելով Կողմերի միջև վերոնշյալ Պայմանագրի 7.11 և 2.1.3 կետերը:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը (2.1.3 ենթակետ): Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, ծանուցում է Ձեզ ՍՀԱՊԱԹ-ԳՀԾՁԲ-2024-3/Ս գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին: Պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված 7 327 958/յոթ միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար ինը հարյուր հիսունութ/ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, համաձայն որի «պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու

մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլ. փոստին»:

Պատվիրատուն գնման ընթացակարգը միակողմանի լուծելու մասին որոշումը կներկայացնի լիազոր մարմնին՝ հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջները:

Տեղեկացնում ենք նաև, որ «Էլիտ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ որպես պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտած կազմակերպություն, ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե մասնակիցը հրավերով և պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարները:

Վերոգրյալի հաշվառմամբ տեղեկացնում եմ, որ եթե 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրում նշված պատվիրատուի հաշվի համարին Ձեր կողմից վճարվի 940000 /ինը հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ, որպես պայմանագրի ապահովման և 1410000/մեկ միլիոն չորս հարյուր տասը հազար/ՀՀ դրամ, որպես՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Էլիտ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով

Տնօրեն Կ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

Կատարող Գ. Կնյազյան

Հեռ. 093 81 95 15